



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌԵԺԻ. 1865 — ՔԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՅՈՒՆԻՍ

ԽՕՍՆԱԿՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՆԱՊԱՏՍ ՀԱՅՈՑ

Ե

« Իսկ քեզի, ով երանելիդ Յով-
 » հաննէս, ինչ խօսքերով կրնամ ան-
 » թառամ պսակ մը հիւսել, կամ հիւ-
 » սածս դնել, յանդգնելով գովել ըզ-
 » քեզ՝ յետ ելնելուդ յասպարիզէ այս
 » կենացս. վասն զի անցար ազատե-
 » ցար դու մրրկաց վտանգներէն : Ար-
 » դեօք այն մովսիսական ծաղկանց պը-
 » սակն հիւսեմ՝ որով պսակեցնա օրհնե-
 » լուն ատեն զժրագործն Յովսէփ և զաս-
 » տուածարեալ քահանայն Ղևի. վասն
 » զի երկուքն այլ կու տեսնեմ ՚ի քեզ :
 » Յօրհնութեան Տեառն երկիր քո. ՚ի
 » ժամանակաց երկնից և ՚ի ցօղոյ, և
 » յանդնդոց աղբերաց ՚ի ներքուստ. ՚ի
 » ժամանակի արդեանց արեգական փո-
 » փոխմանց, և ՚ի գումարելոյ առ մի-
 » մեանս ամպոց. ՚ի գազաթանց լե-
 » ղանց իսկզբան և ՚ի գլխոց բլրոց մշտն-
 » ջննաւորաց. . . եկեսցեն ՚ի վերայ գըլ-

» խոյն (Յովհաննու) և ՚ի վերայ դազա-
 » թան փառաւորելոյն ՚ի մէջ եղբարց :
 » Անդրանիկ ցլու գեղ նորա, և եղլիւրք
 » միեղջերոյ եղլիւրք նորա. խեթկեսցէ
 » նոքօք զազգս միանգամայն՝ մինչև ՚ի
 » ծագս երկրի : — Տուք (Յովհաննու)
 » զյայտնութիւն նորա, և զճմարտու-
 » թիւն նորա՝ առնն անարատի, զոր փոր-
 » ձեցին փորձանօք և բամբասեցին զնա
 » ՚ի վերայ ջրոցն հակառակութեան. որ
 » ասէր ցհայր իւր և ցմայր իւր՝ թէ ոչ
 » տեսի գքեզ. և զեղբարս իւր ոչ ծա-
 » նեաւ, և զորդիս իւր ոչ գիտաց : Զգու-
 » շացաւ բանից քոց և զուխտ քո պա-
 » հեաց : Պատմեսցեն զիրաւունս քո
 » Յակովբայ և զօրէնս քո իսրայելի .
 » զիցեն խունկս ՚ի բարկութեան քում
 » հանապազ ՚ի վերայ սեղանոյ քո : Օր-
 » հնեա՛ Տէր զգօրութիւն նորա, և ըն-
 » կալ զգործս ձեռաց նորա. խորտա-

» կեա՛ զմէջս 'ի վերայ յարուցելոց թըշ-
» նամեաց նորա, և ատելիք նորա մի
» կանգնեցին » : Իսկ ես աւելցրնեմ
» զայս այլ, թէ « Որք սիրենն զնա, Տէր
» Յիսուս, մի ամաչեցեն. զի քո է կա-
» ռողութիւն յաւիտեանս. ամէն¹ » :

Հապա մենք, Հայկակ, լռե՛նք հոս, թէ
դառնա՛նք արտասուագին աչք մը տանք
քեզի այլ, ո՛վ ապերան քան ապերախտ
քաղաք կոստանդիանու. որ քարկո-
ծէիր և հալածէիր զառաքեալսն առ-
քեզ 'ի Տեառնէ, զԱստուածաբանս և
զՈսկերերանս. որ ոչ կամեցար, կամ
թէ ոչ կամեցան՝ ժողովել զմանկունս
քո՝ որպէս ձագս հաւուց ընդ թեովք
այսպիսի հարց. ահա թողեալ լիցի ե-
կեղեցի քո աւերակ տխրորակ, մինչև
ասիցես վասն հովուին քո Յովհաննու՝
օրհնեալ եկեալն յանուն Տեառն : . . .

Ահհհհար է նկարագրել Ոսկերերանի
մահուան ազդեցութիւնն այն մեծ քաղ-
քին և բոլոր թեմին, բոլոր եկեղեցւոյ
մէջ. — հաւատարմաց սրտաբեկութիւ-
նը, Ոլիմպիադեանց սուգը, երկու բա-
ժանեալ կողմանց այլ ափշութիւնը.
բարեսիրաց արտասուախառն յերկինս
նայիլն, ձախակողմեանց սևերես ակըն-
կորութիւնն. ոմանց հանդարտ և այլոց
ալէկոծեալ խիղճն. և մանաւանդ ա-
սոնց մէջ ամենէն աւելի պատասխա-
նատու կամ պարտական եղող Արկա-
դիոս կայսեր տագնապն. որ և սրտա-
հար ըրածին և տեսածին վրայ, թէպէտ
ջանաց քիչ մը դարման ընել, բայց յետ
քանի մ'ամսոց դեռ միջակ հասակին
մէջ իջաւ 'ի գերեզման. կենդանութեան
ատեն տեսնելով՝ հալածեալ սրբոյն հա-
կառակողաց շատին տարածամ և դժըն-
դակ մահերը, ինչպէս ոմանցն առաջ յի-
շեցինք. և ոմանք այլ անոնցմէ աւելի չա-
րաչար ցաւերով, խելաթափութեամբ,
բերաննին խեղաթիւրելով, շրթուք-
նին որդնոտելով, ջրգողութեամբ, համ-
րութեամբ, և այլ պէսպէս ցաւալի կեր-
պով մեռան : Մնացեալներէն շատն

սմբեցան, ձայներնին քաշեցին. ոմանք
'ի կեանս և ոմանք մեռնելու ատեն զըղ-
ջացին. ինչպէս ամենուն պարագլուխն
Քէոփիլոս պատրիարքն, որ չկրցաւ,
կ'ըսեն, վերջին շունչը տալ՝ ինչուան որ
յերկնից քաւիչ և օգնական չկանչեց
իր վրէժխնդրութեան սուրբ զոհը : Զա-
սոնք տեսնելով խորագէտն Ատտիկոս՝
Արչակայ պէս ապօրէն յաջորդ աթո-
ռոյն Կ.Պօլսի, (որ և ամաչելով խոստո-
վանիմ՝ որ ազգաւ Հայ կ'ըսուի 'ի Սե-
բաստիոյ քաղաքէ), աւելի ճարպիկ
քան գիտուն, վերջապէս լեզուն նաև
սիրտն այլ փոխեց. հրամմեց որ իր
վարդապետին անունն այլ խառնեն յե-
կեղեցիս Ս. Հայրապետաց հետ, և ինքն
այլ իբրև սուրբ և Ոսկերերան հռչա-
կէր զնա, և գրէր իսկ առ մերս Ս. Սա-
հակ, որպէս տեսանք 'ի սկզբան : Ա-
սով սկսան Յովհաննիսեանք և հակա-
ռակողք՝ իրարու մօտենալ. բայց դեռ
կատարեալ միութիւն չեղաւ, որովհե-
տե յետ Ատտիկոսի ուրիշ բռնաբարողք
և ոչ արժանաւայեքք՝ յաջորդեցին,
մինչև յետ երեսուն ամաց նստաւ երա-
նելին Պրոկլ (434), աշակերտ և ունկն-
դիր մեծի Հայրապետին. բայց դեռ դեռ
չվերցաւ Կ.Պօլսի եկեղեցւոյ սև քօղն, և
ոչ արհաւիրք քաղաքին յերեսաց Աս-
տուծոյ. և դեռ զողայր դղրդէր գերեզ-
մանն Եւդոքսեայ : . . .

« Երեսուն և մէկ տարի յետ վախ-
» ճանի Սրբոյն՝ յանարգ աքսորանս Պոն-
» տոսի, կ'ըսէ իտալացի վարդապետ
» մը¹, եպիսկոպոսն Պրոկլոս Կ.Պօլսի մէջ
» ներբող մը խօսելով 'ի պատիւ սրբ.
» բոյն, անանկ կենդանի կերպով նկա-
» ռագրեց անոր արդիւնքը, անանկ ար-
» ժանաւորապէս բարձրացուց անոր ա-
» ռաքինութիւնները, որ բոլոր ժողո-
» վուրդն չգիմանալով սկսաւ կանչել՝
» որ բերեն իրենց Հայրապետը : Այն
» ատեն Պրոկլ՝ զրգռեալ ժողովրդեան
» երեսփոխան ըլլալով, դարձաւ առ
» կայսրն թէոգոս (Փղքր) որ հոն ներ-
» կայ էր, և յորդորեց որ կատարէ այս

¹ Այս խօսքերս են Պալլագիոսի 'ի վերջ պատ-
մութեան վարուցն Ոսկերերանի :

¹ Հ. Պ. Սէնիերի :

» օրինաւոր փափաքը և ձեռք ձգէ այն
 » անգին գանձը : կայսրն՝ որ արգէն մե-
 » ծապէս փափաղէր այս բանիս, այս
 » ձայներէս աւելի բորբոքեալ, մէկէն
 » հրաման տուաւ որ նուիրակը պատ-
 » րաստունն և երթան բերեն 'ի կոմա-
 » նայէ 'ի Կ.Պօլիս՝ փափաղելի մարմինը :
 » Շերակուտէն պատուաւոր անձինք
 » ընտրուեցան 'ի նուիրակութիւն, զի-
 » նուորք 'ի պահպանութիւն, պալա-
 » տականք յընկերակցութիւն, ճարտա-
 » րագէտք 'ի գործավարութիւն, և
 » կառք 'ի յուղարկաւորութիւն : Բայց
 » երբ հասան 'ի կոմանիս, և ուզեցին
 » այն պատուական աւանդը վերցնել
 » իր տեղէն, անշարժ և անկամ գը-
 » տան զանիկայ : Ի զուր հազար ձեռք
 » զարկին, հազար նիգ դրին քարը շար-
 » ժելու, անկարելի եղաւ. ամբշնալով
 » սրտակտուր գրեցին առ ինքնակալն՝
 » թէ Յովհաննէս չուզեր դառնալ գալ :
 » Այս լսելուն թէոդոս սոսկաց, ամիշե-
 » ցաւ, խռովեցաւ. վերջը ուշաբերե-
 » լով և գերագոյն մտածութեամբ մը
 » թուղթ գրիչ ուզեց, և 'ի ծունկ ըն-
 » կած՝ իր ձեռքը երկայն աղերսագիր
 » մը գրեց առ սուրբն՝ որպէս թէ կեն-
 » դանի ըլլար, յորդորելով և աղաչե-
 » լով որ հաւանի դառնալու իր ակն-
 » ուր : Ստորագրեց անունը, ծալեց,
 » կնքեց թուղթը և յանձնեց քաջըն-
 » թաց սուրհանդակի մը : Կրնայ գու-
 » չակուիլ թէ ինչ զարմանք եկաւ ծե-
 » րակուտին՝ երբ արքունի հրովար-
 » տակն առնելով՝ տեսան վրան այս ան-
 » կարծելի հասցէն. Առ հոգեւոր հայրն
 » հոգեւոր և տիեզերաց վարդապետն
 » Յովհաննէս Ոսկեբերան : Դուռ մը
 » գացին 'ի գերեզմանն. և մինչդեռ ո-
 » մանք ջերմեռանդութեամբ չորս գին
 » կենային, ոմանք անուշահոտ բուր-
 » փառներով, այլք պայծառափայլ ջա-
 » հերով, ծերունեաց զխաւորն առաջ
 » անցաւ, և պատկառանք պաղնելով
 » նամակը, Այս գիրս, ըսաւ, կու խաւ-
 » րէ հայրութեանդ՝ քու ծառայդ և իմ
 » տէրս թէոդոս : Եւ իբրեւ թէ հրաման
 » առնելով՝ կարգաց անոր. յետոյ այն-

» պէս բաց թուղթը՝ կրծքին վրայ դնե-
 » լով՝ ընկաւ 'ի ծունկ, և սկսաւ այ-
 » լոց հետ աղաչել՝ որ իր մեծահոգի
 » բարեսիրութեամբն յանձն առնու ա-
 » ղաչողաց խոնարհութիւնը : Կարծես
 » թէ սրբոյն դէմքն այլ պարզելով՝
 » սիրտ տուին անոնց. որք երբ նորէն
 » ձեռք զարկին հանելու՝ անանկ դիւ-
 » րաշարժ գտան, որ մէկէն ուրախու-
 » թեամբ պատրաստուեցան ճամբայ
 » ելնելու : Երկայն կ'ըլլար պատմին
 » թէ ինչ չքեղ զարդուք, ինչ ջերմե-
 » ռանդութեամբ և ինչ խուռն բաղ-
 » մութեամբ ժողովրդեան՝ մեծայարգի
 » քահանայից ուսոց վրայ դրած՝ բե-
 » րին մինչև 'ի ֆաղկեդոն : Հոն հասեր
 » կու սպասէր ինքնակալն ամբողջ տոր-
 » միաւ մեծ ու պզտիկ և պայծառ զար-
 » դարած նաւերու. և իր պարագլուխ
 » փառազարդ նաւովն առաջ անցնե-
 » լով, 'ի ծունկ իջած ընդունեցաւ հոն
 » սրբազան աւանդը. և 'ի հնչել ուրա-
 » խաձայն փողոց և քնարաց, թմբկաց
 » և տաւղաց՝ նշան տուաւ որ մէկէն
 » դէպ 'ի Կ.Պօլիս դարձնեն նաւերը :
 » Թողունք հիմայ որ ինքնին ծովն պատ-
 » մէ, թէ տեսեր էր երբէք ասոր նման
 » գեղեցիկ յաղթանակ : Ամէն կողմի ծով-
 » եղերքն մինչև հեռաւոր սահմաններ՝
 » փայլ փայլ ցոլային ջահերով և լապ-
 » տերներով. երկինք հանդարտ ծիծա-
 » դէր, ալիք խաղաղ ծածանէին. և հա-
 » փա հեղիկ զեփիւռներ անուշիկ մը
 » ջրերուն զարնելով թեւերին՝ կար-
 » ծես թէ կ'ուզէին նուագաց հնչման
 » հետ ներգաշնակել ալեաց մրմունջը :
 » Ամեն նաւ ոսկիով կու շողջողէր, ա-
 » մեն առագաստ ծաղկով պսակած էր,
 » և ամեն ցուկը նաւուց՝ բոցով նշա-
 » նաւորեալ : Առջեւն հասարակ նա-
 »ւերն կ'երթային, յետոյ աղնուակա-
 » նացն, և ամենուն ետեւն՝ ծովապե-
 » տականն, որ և ամենէն աւելի աչքի
 » կու զարնէր թէ ահեղ մեծութեամբն,
 » թէ պայծառութեամբ լուսաւորու-
 » թեանն և թէ պճնապաճոյճ զօրղա-
 » ղանքն : Գրեթէ նաւահանգստին մօ-
 » տեցեր էին, երբ յանկարծ մէկ վայր-

» կենի մէջ երկինք մըրկելով և ծով
» խռովելով, անանկ ահաւոր փոթորիկ
» մը փրթաւ, որ առաջաստները պա-
» տըռտելով, կայմերը կոտորտելով՝ ցիր-
» ուցան ըրաւ նաւատորմիդը : Ո՛հ,
» ինչպէս յանկարծակի գոհաբանա-
» կան սաղմոսներն՝ փոխուեցան ՚ի հա-
» ռաչանս զարհուրանաց . մէկն կու վա-
» խէր թէ հիմայ պիտի խղզուի, մէկ-
» այլն ընկերին կենաց վրայ կու դո-
» ղար, և աւելի շատերն կու վախէին
» կորսնցընելու այն սրբազան աւանդը .
» որպէս թէ ծովն՝ որ և զայրացած
» զկուած դուրս կու ժայթքէ ուրիշ
» դիակները, այս մարմնոյս սովեալ և
» կարօտ ըլլայ : Բայց ամեն վախ և կաս-
» կած փարատեցաւ՝ երբոր տեսան որ
» ինքնին սուրբն այս մըրիկը հաներ
» էր, որպէս զի այս փոխադրութեան
» ատենը զայ բարեւելու այն նշանաւոր
» այգին Այրուոյն՝ որոյ համար այնչափ
» տառապանք քաշեց . հազիւ թէ ծո-
» վապետական նաւն հասաւ այն կողմի
» ծովեղբերին, մէկէն օդն հանդարտե-
» ցաւ, հովերն լռեցին, ալիքն խաղա-
» ղացան, և բոլոր նաւախումբն մէկ-
» տեղելով՝ ուրախութեամբ հասան ՚ի
» կայսերական քաղաքն :

» Հոս այլ նոր հանդէպ, նոր զար-
» մանք սկսան . ձիաւորք, զինաւորք,
» քահանայք, ամենքն թափեցան ա-
» փանց վրայ, և մեծ թափօր մը կազ-
» մեցին մինչև յեկեղեցին Առաքելոց,
» որոց ետեւէն իբրև յաղթանակաւ՝
» կայսերական կառաց վրայ կու գար
» սուրբ մարմինն : Իսկ ինչպիսի հե-
» տևողք կարծէք այսպիսի չքեղ յու-
» ղարկաւորութեան . — Համբը, որոց
» լեզուն կու բացուի . խուլք՝ որ ձայն
» կու լսեն . կաղք, որ ՚ի վաղ կ'եննեն .
» կոյրք՝ որ լոյս տեսնեն . հիւանդք՝ որ
» կ'առողջանան . և ասոնց հետ մէկտեղ
» անանկ հեղեղ մը ժողովրդեան՝ որ
» հազիւ կու սղմի Կ.Պօլսի մէջ : Ոչ ոք

» այն օր հետաքրքրութիւն ունեցաւ
» նայելու՝ ոչ յաղթանակի կամարաց
» վրայ, որ ամեն փողոցի մէջ կանգ-
» նած էին, ոչ պանծալի արձանա-
» գրութեանց վրայ՝ որ ամեն պատի
» վրայ կախուած էին, և ոչ ամեն
» պատուհանէ անձրևի նման թա-
» փուած ծաղկանց վրայ : Ամենքն ի-
» ռար հրելով՝ կու ջանային մտնել ՚ի
» սուրբ տաճարն, ուր հանգչեցընելով
» պատուելի աւանդը, պատրիարքն
» բացաւ մտուկը՝ որ ցուցընէ ժողո-
» վրդեան զՍուրբն :

» Անկարելի եղաւ հոս գորովալից
» ժողովրդեան բերանը բռնել զայն տես-
» նելուն . ամենքն միասիրտ միաբե-
» ռան աղաղակեցին, « Եթող հրամ-
» մէ, սուրբ Հայրապետ, նստէ քու ա-
» թոռ » : Պաշտօնեայքն պատկառա-
» նօք առին տարին հոն տեղաւորելու .
» և ահա սուրբն ՚ի տես ամենեցուն մե-
» ռած շրթունքը բանալով, և յստակ,
» պայծառ ու վսեմական ձայնով մը՝
» արտասանեց, Խաղաղութիւն ւա՛մե-
» նեցուն : Որոտմունք աղաղակի հնչե-
» ցին այս ձայնին, կրկնապատկեցան
» լացք և արտասունք . կայսրն թէոդոս
» ՚ի ծունկ ընկած յօտս իր սրբազան
» (կնքա) հօրն՝ չէր դադրէր արցունքով
» թրջելէն, և ստէպ ստէպ պագնելէն,
» մինչև զրեթէ հարկ եղաւ բռնի վեր-
» ցընել զայն առջևէն, և դնել հոյա-
» կապ շիրմի մը մէջ ՚ի ներքոյ խորա-
» նին » :

Այս երկայն ծնրադրութեան ատեն
» աղաչեց և խնդրեց թէոդոս իր մօր Եւ-
» դոքսիայ անգիտութեան և անիրաւու-
» թեան թողութիւն . և « յորժամ խոնար-
» հեցոյց որդին նորա զգլուխ իւր ՚ի վե-
» ռայ լանջաց սրբոյն ՚ի պաղատանս,
» ընդ կատարումն աղօթիցն և դադա-
» ղեաց շարժումն (գերեզմանին Եւ-
» դոքսիայ) . և ամենեքեան փառաւո-
» ղեցին զԱստուած » : Անկէց աւելի մեծ
» դադարումն և խաղաղութիւն եղաւ
» ընդդիմակիր սրտից . վասն զի « միա-
» բանեցան ամենայն եպիսկոպոսունք
» և ժողովուրդը՝ որք հերձան ՚ի մի-

1 Եւդոքսիա անիրաւութեամբ յափշտակեր էր
» այս այգին այրի կնկէ մը . անոր համար Ոսկեբե-
» ռան յանդիմանեց զթագուհին . իսկ նա ռխացաւ
» և հալածել տուաւ զսուրբը :

» մեանց վասն անիրաւ անկման և ար-
» սորանաց Ոսկերեքանին » : Այս մե-
ծահանգէս և մեծայիշատակ գործն ե-
ղաւ յամին 438 'ի 27 աւուր յունուա-
րի . անոր համար փոխանակ մահուն օ-
րուան (14 սեպտ.) այս օրս հաստատե-
ցաւ տօն յիշատակի խօսնակին եկե-
ղեցւոյ , յորում իր սուրբ մարմինն դար-
ձաւ և հանգեաւ իր հայրապետական
եկեղեցւոյն մէջ . և ամենայն ազգք քրիս-
տոնէից այս օրս նշանեցին իրենց յայս-
մաւուրաց մէջ՝ հաստատուն և մեծա-
գոյն օր յիշատակի և փառաց Ոսկերե-
քանի :

Այն երջանիկ և բուն օրն դարձման
մարմնոյն յաթոռն , Կ.Պօլսի համաշխար-
հական հանդիսին և մեծ եկեղեցւոյն
մէջ՝ ընդ բազմաթիւ մերազգեաց , որք
անտարակոյս կային հոն , հաւանօրէն
գտնուած են և ոմանք 'ի թարգմանչաց մե-
րոց , որք ուսմունքնին կամ գործերնին
աւարտած՝ դառնալու վրայ էին առ Ս .
Սահակ և Մեսրոպ . թերևս իրենցմէ ո-
մանք ասով աւելի վառեցան այն տիե-
ղերական և իրենց դրացի և հիւր վար-
դապետին գրուածներն՝ որչափ որ գլու-
նէին կամ կարենային՝ թարգմանել ի-
րենց լեզուով , ինչպէս ուրիշ Ս . Հարց
այլ : Այնչափ հաւանելի կ'երևի ինծի
այս բանս , որչափ որ Ոսկերեքանի գոր-
ծոց հայերէն թարգմանութիւնքն գե-
րագոյն են քան զայլ շատ թարգմա-
նութիւնս . գրեթէ և անկարելի ասանկ
ըլլալն՝ առանց մասնաւոր կամ կարգէ
դուրս ներշնչութիւն մ' ունենալու . և
այս եղած է՝ կամ վերոյգրեալ հանգե-
սը տեսնելով , կամ լսելով յականատե-
սից սրբոյն ըրածները և կրածները 'ի
նոյն իսկ իրենց աշխարհին մէջ ('ի փոքր
Հայս) , և կամ ոմանց (գոնէ երիցագու-
նից և իրենց վարդապետաց՝ Սահակայ
և Մեսրոպայ) , անձամբ այլ տեսած
ըլլալով զնա կամ խօսած կամ թղթա-
կից եղած : Կ'արժէր շատ բան զրուցել ,
այս ոսկերեքանեան գրոց ոսկիական
հայ թարգմանութեան վրայ , բայց բա-
ւական ըլլայ ըսելն՝ թէ գրոցն արժանի
է թարգմանութիւնն . եկեղեցւոյ խօս-

նակին արժանաւոր լեզու մը տուեր է
հայկազնն իր սեփականին մէջ . թերևս
եթէ Հայ ըլլար՝ քան զայս լաւ չկարե-
նար հայկաբանել Յովհաննէս . թերևս
և ոչ իսկ իր բնիկ յունաբանութեամբն՝
առաւելու քան զհայ թարգմանութիւնն .
և թերևս թերևս տեղ տեղ հայ թարգ-
մանն գերազանցէ քան զյոյն բնա-
գիրն . և յանդգնիմ՝ ըսելու՝ թէ խօս-
նակն եկեղեցւոյ երբեմն աւելի վեհա-
գոյն և պերճախօս Ոսկերեքան է հայկա-
բանութեամբն՝ քան ուրիշ որ և է լե-
զուով , նաև իւր բնիկ հեղինականաւն :
— Անշուշտ մեծ պարծանք է այս այն
ազգին՝ որ օտար ըլլալով կրցեր է Ոս-
կերեքանին շնորհքն աւելի մեծցնել ,
և փայլուն ոսկին՝ բարակ բանուածքնե-
րով աւելի ազնուացնել :

Ասով՝ այս այլ յայտ է՝ թէ որչափ
մեր հայերէն գրականութիւնն փառք
և վայելք ստացեր է . զոր և առատա-
պէս կրնան վայելել բանասէրք և հո-
գեսէրք՝ Ոսկերեքանի հայերէն տպա-
գրութեամբ հրատարակեալ գրութիւն¹ .
որոցմէ դուրս գտուին ուրիշ գրուածքն
այլ . և որոց մէջ մեզի համար ամենէն
նշանաւոր և յիշատակաց արժանին է
Մեկնութիւն Եսայեայ մարգարէի , ըն-
տիր թարգմանութեամբ . այնչափ պա-
տուական է այս գործս , որչափ որ հի-
մայ յոյն բնագիրն ամբողջ չի գտուիր ,
այլ մինչև յովթերորդ գլուխն . և կ'երևի
թէ մինչև հոս նախ գրեր էր Սուրբն և
դադրեցուցեր , յետոյ (գուցէ յաքսո-
րանսն) մնացեալն այլ աւարտեր . մեր
թարգմանիչն՝ առաջին մասը գտեր է
նոյն ինքն Ս . հեղինակին համբուրելի
մատամբքն գրեալ , ինչպէս և ծանու-
ցուած է մէկ հնագիր օրինակի մէջ՝ որ
իմ ձեռքս այլ հասեր է . « Մինչև ցայս »
» վայր գտաւ իւրով ձեռովք գրեալ ե-
» ղանելոյն Յովհաննու յունարէն » ,

¹ Որք են 6 հատոր մեկնութեան նորա Մատթ .
աւետարանին և Թղթոց Պօղոսի , և շատ Ճառք :
Դարձեալ 2 հատ . Ճառք և Յաղագս քահանայու-
թեան Գիրք նորա , նոր թարգմանութիւն . այս
ամենքն այլ տպագրեալ 'ի Ս . Ղազար 1818, 1826,
1861 : Մեկնութիւն Յովհ . աւետ . տպագրեալ 'ի
Կ.Պօլս :

Անշուշտ անգամ մ'այլ պարտական պիտի ըլլան հայկական դպրութեանց՝ որոնք որ բազմ ունենան կամ այս հայերէն թարգմանութիւնը կամ ասկից այլ ուրիշ լեզու թարգմանածը կարգալ։ — Ասոր հետ կրնամք յիշել նորէն զներքող լուսաւորչին, որ և նոյնպէս միայն հայերէն կայ և դեռ թարգմանած չէ յայլ լեզու։ Եւ թէպէտ շատ ուրիշ գործեր այլ ունի Ոսկերեւրան, որ կամ թարգմանած չեն 'ի մեր լեզու, կամ մեր ձեռքը չեն հասած, այլ եղածին և հասածին վրայ այլ մեծապէս երախտապարտ եմք՝ թէ թարգմանչացն, (յորոց՝ անուամբ միայն թեոդորոս ոմն յիշի), և թէ հրաշալի հեղինակին՝ որ այնքան պէսպէս կերպով պատուեր է ըզհայութիւն, սիրեր մեր ազգը, զարգարեր մեր դպրութիւնը, և լուսաւորեր Հայաստանեայց եկեղեցին՝ յետ իւր յունականին, և երկոցուն հաւասար պարգևեր անմահ և անմոռաց յիշատակ՝ զառաջին գիրք քրիստոնէութեան յետ առաջին (Սուրբ) գրոց, զՊատարագաւնաւոյցն, որով աստուածային գերահրաշխորհուրդն կատարի 'ի մեզ. — այս, մեր Ս. Հարց նախնեաց վաստակն այլ կայ այն սրբազան մատենին մէջ, բայց աղօթից մեծագոյն մասն Ոսկերեւրանի աստուածեռանդն սրտէն բղխած է։ Կրնամք ըսել թէ յետին և հզօրագոյն չաղկապ Հայ և Յոյն եկեղեցւոյ և դպրութեանց՝ եղած է Ոսկերեւրան։

Ոսկերեւրանի սիրոյն, պատուոյն և բարեաց երախտապարտ Հայկազին՝ գուցէ կրնայ և ինքն մեծանձնն այն երախտապարտ ըսուիլ՝ այս (մեր) ազգէն զըտած ընդունելութեամբը, սիրովն, պատուով և իր երկասիրութեանց հաւատարիմ՝ և արթուն պահպանութեամբ. — և ոչ միայն իր գրոց, այլ և իրեն վերայ խօսուած գրքերով, զորս թարգմաներ են Հայք¹, և որոց վրայ իրենք

այլ աւելցուցեր են քանի մը գովասանական երգեր և յիշատակներ¹։ — Իսկ իր սրբութեան և երկնաւոր անմահութեան յիշատակին այլ ջերմեռանդն մեծարողք ըլլալին յայտներ և յայտենն՝ ոչ միայն անոր ակօղական քաղքին (Կ.Պօլսոյ) մէջ իրեն նուիրած եկեղեցեօք, այլ և օտար կողմեր, և մանաւանդ այն տեղուանք՝ ուր իր վերջին կեանքն անցուց, 'ի սահմանս աշխարհին մերոյ. թէպէտ ակոհս, որ ինչպէս առաջ յիշեցի, այս կողմերս հիմայ քիչ ծանօթ ըլլալով՝ իրենց յիշատակարաններն այլ ծածկին²։

Բայց չիկրնար և պէտք չէ բոլորովին անծանօթ և ծածուկ մնալ մեզմէ՝ գոնէ Ոսկերեւրանի կենաց յետին յիշատակարանն, միանգամայն և յետին աւանդն, զոր թողուց 'ի ձեռս Հայոց. — իր մահուան և անմահութեան միջնորդ գերեզմանն։ — Երբոր թէոդոս կայսեր խնդրանք մարմինն փոխադրեցաւ 'ի մայրաքաղաք, բնակիչք կոմանայ գրեթեւաբէին և հակառակէին թողուլ իրենց հիւրը և երազահաս օգնականը. և միայն թագաւորական զօրաց վախէն՝ ետ կեցան, շատանալով սրբոյն պատանքը իրենց մէջ բաժնելու, և անոր գերեզմանը իբրեւ աւանդապահ պատուելու։ Հաւանական է որ այն աւտենն այլ այս քաղքին բնակչաց մէկ մասն Հայ էր, և ժԱ դարու մէջ աւելի այլ հայացաւ՝ երբ Գագիկ կարուց թագաւորն՝ փոխանակ իր երկրին՝ այս կողմերս առաւ իրեն ժառանգութիւն։ Հին և նոր գաղթականք մեր ազգայինք՝ պատուեցին այս տեղոյս ամենէն սրբազան յիշատակարանը՝ հազար տարի. և երբ ստիպուեցան հեռանալ 'ի կոմա-

Սոկրատայ պատմութենէն քաղուած վարք։ — Պրոկղի ներբողեանն յՈսկերեւրան. և այլն։

¹ Ծանօթ երեք տուն ընտիր շարականն « Որ յանսկիզբն 'ի հօրէ »։ — Գր. Անաւարդեցոյ այբբենական շարականն՝ որ իր շինածներուն մէջ ընտիրներէն մէկն է։ — Գանձ մի 'ի Գէորգայ. և ուրիշ գանձք և տաղք։ — Վարք համառօտք։

² Այս կողմերս՝ հաճնայ արեւմտակողմը՝ Սէյհունի եզերքը Գառաշ աւանին մէջ ուխտատեղի մը կայ Ոսկերեւրանի, հիմայ 'ի ձեռս Յունաց։

¹ Ինչպէս ընդարձակ Վարք նորա գրեալ 'ի Գէորգայ Երուսաղեմացւոյ և թարգմանեալ 'ի Գր. Վկայասիրէ, յամի 1102. լաւ բանադատութիւն չունի այս պատմիչս, և ոչ սակաւ սխալ։ —

նայէ՛ք քաղըին կործանման պատճառաւ, (զորոյ որպէսը չեմ՝ յիշեր), Ոսկեբերանի մարմնոյն տաճարացեալ տապանակն այլ առաքելին հաւատարմութեամբ՝¹ հետերնին տարին։ Ոսկեբերանի առաջին հանգստարանն, որ և Ս. Բասիլիսկոսի, կէս ժամու չափ հեռու է յաւերակաց Կոմանայ քաղաքի, և մինչև հիմայ ցուցուի տեղն քարակոյտ։ Իսկ նոր հանգրտարանն՝ ի գեղն Պիճեռի, երկու ժամու հեռու ի Կոմանայէ։ Հոս է վանքըն Ս. Նշան, որ հիմայ կոչուի Ս. Ոսկիքերան. և գրեթէ նորէն շինեցաւ մեր ատեն (1842). և աւանդատանը մէջ ամփոփեցաւ մատուռն յանուն սրբոյն. յորում կայ և իր գորչագոյն կճեայ գերեզմանն քանդակազարդ կափարչաւն, ընդ հովանեաւ Ս. Նշան խորանին. ուր դան և Յոյնք յուխտ՝ բարի նախանձով,

տեսնել իրենց հայրապետն իբրև իր վերջին օթևանին մէջ հիւրընկալեալ ի հայոց՝¹։ Երանի մերոնց՝ թէ կարենան միշտ այն սաւառնաձայն հովտին մէջ՝ (զոր երկուստեք պատելով իռիս և Գայլ գետ՝ մեծ կարկաշանք վաղեն գնան յարևմուտս՝ ընդ լեռինս և առապարս՝ միանալ մէկմէկու, դառնալ ի հիւսիս և թափիլ ի Պոնտոս), պահել և պատուել այն նախանձելի հանգստարանը, ուր միայն հանգչեցաւ լեզուաւ և մարմնով՝ աստուածաշարժ Խօսնակն Եկեղեցոյ։ Երանի մերոնց, թէ մեր նախնեաց պէս կարենան սիրողք և սիրելիք ըլլալ Ոսկեբերանի։ Եւ դարձեալ երանի եթէ կարենան միշտ զգալ և ըսել իրենց մէկ հին տաղասացին հետ.

«Մեծի Ոսկիքերան, քո սիրովդ՝ ոչ յագեւնաւ տիեզերաց ազիւք»²։

¹ Այս դիպուածս անշուշտ փէ դարու առաջին կիսուն հանգիպած է, վասն զի գեո՝ ի Կոմանայ յիշուի յամի 1596, ի Ստեփանոսէ Եւդոկիացւոյ, որ կ'ըսէ.

«Մայրաքաղաքս այս Թօխաթի՝
Որ Կոմանու խիստ է մօտի,
Յորում տապանն է Յովհաննու
Ոսկեբերան վարդապետի»։

Իսկ յամին 1658 արդէն յիշատակուի տապանն ի Ս. Նշան վանս։

¹ Փափագելի է որ վանապահք տեղւոյն մեզի աւելի ծանօթութիւն տան, և թէ կարելի է՝ ըզպատկերն իսկ գերեզմանի Ոսկեբերանին. զոր թէ և ոչ սակաւ Եւրոպացի ճամբորդք յիշեն՝ այլ ոչ ըստ մեր բաւականին։

² Տէս ի Բազմավէպ 1864, Երես 544։

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

Գորտք խնդրեմ յԱրարնագոյս ինքեանց քաղաշոր.

Ձանձրացեալ հոսկ եւ գորտուց պար
Ի վաղեմի վարչութենէն ուսկաւար,
Ձայն ամբարձին առ դիցըն Հայր.
— «Լուր մեզ, ով մեծըդ Զբոռանեան,
» Որ յակնարկելդ շարժես զհամայն,
» Տուր թագաւոր մեզ զոմն ըզգաստ,
» Զի լուիցէ գմեր դատ եւ փաստ.
» Զի դու Հայր՝ կաս յերկինս ի վեր,
» Խըտրոց ընդ մէջ անբաւ եթեր»։ —
Դիպեալ պահու բարեբաստիկ՝
Բողոքարկու ազին գորտեան,
Չեղեն յերկար անլըսելիք,
Եւ ըզխնդրեալն արքայ՝ նկալան։
Պայր լուսաճեմ նա ի յարկաց՝
Ի տամուկ կայս մերկ լուղակայ։

Այլ շառաչիւնն ահաւոր
Զոր ի վայրէջսն գործեաց՝
Ահաբեկեաց զազգն անզոր։
Վոգցես թափեալ ի մըտաց,
Հսո ոմն ի ծակ, ոմն ի մօր,
Բարձաւ գորտեանն ի միջոյ։
Իսկ թագաւորն այն երկնառաք,
— Յածութեան տինս եւ օրինակ, —
Կամ թէ ասել իբրու դըշխոյ
Ըզգնայր ի լիւղ հեզիկ հողմով,
Ընդ տարրըն լոյծ երերալով։ —
Չաղգ եւ ըզճետ թէ զարբայիս
Երբէք գիտել ցանկանայցես,
Յերկինս ի վեր մի զուր հայիս,
Քանզի բուսեալ տունն է յերկրէս